ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2013թ. թիվ 235-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն 2002թ. դեկտեմբերի 6-ի «1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված փախստականների համար կառուցված բնակարանները սեփականության իրավունքով փախստականներին հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 714-Ն որոշման 1-ին կետի «ժա» ենթակետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հաշվի առնելով Լոռու մարզի Սպիտակ քաղաքի Հարավ-Արևմտյան թաղամասի 22ա հասցեի բնակիչ Ա. Աթայանցի դիմումը՝

Որոշում եմ.

1 Միացյալ ազգերի կազմակերպության փախստականների Գերագույն Հանձնակատարի հատկացված միջոցներով կառուցված մեկ սենյականոց քոթեջը /ք.Սպիտակ, Հարավ-Արևմտյան 22ա/ սեփականության իրավունքով, որպես ընդհանուր համատեղ սեփականություն, անհատույց հատկացնել հետևյալ քաղաքացիներին՝ համաձայն հավելվածի:

2. Սեփականատերերին պարտավորեցնել պահպանել բնակարանի շահագործման կանոններն ու նորմերը ըստ գործող կարգի:

3. Քոթեջային բնակարանի սպասարկման համար նախատեսված 0.04237 հա հողամասը սեփականության իրավունքով հատկացնել սեփականատիրոջը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. հոկտեմբերի 24
ք.Վանաձոր